ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 36 - Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետի պահանջով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայտարարել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

1) Հրապարակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարության հրապարակումը և մրցույթի անցկացման ընթացակարգերը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. փետրվարի 12
ք.Եղեգնաձոր